նավետ գիտական աշխատանքի կազմակերպման համար։

Գիտաժողովի աշխատանքներն ամփոփեց գիտաժողովի կազմկոմիտեի նախագահի տեղակալ, ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ջահուկյանը։ Նա գնահատեց և ամփոփեց գիտաժողովի աշխատանքներն ու արդյունքները, ընդհանրացրեց ձեռք բերված նվաճումները։ Միաժամանակ Գ. Ջահուկյանը նշեց հայագիտության հետագա զարգացման հիմնական ուղիները և այն գերը, որ կունենա հայագիտության զարգացման համար հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողովը։

ՊԵՐՃ ՊՈՈՇՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150 ԱՄՅԱԿԸ

1987 թ. սեպտեմբերի 24-ին ՀՍՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում կայացավ գիտական նստաշրջան՝ նվիրված հայ վիպասանության ամենամեծ դեմքերից մեկի՝ Պ. Պոռշյանի ծննդյան 150 ամյակին։

Բացման խոսքով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը։ Ըստ արժանվույն գնահատելով արձակագրի գրական-հասարակական գործունեությունը, նա նշեց, որ Պ. Պոռշյանը հայ ռեալիստական վիպագրության առաջին նշանավոր վարպետն է, ընդհանրապես հայկական ռեալիզմի հիմնադիրներից ու խոշորագույն դեմքերից մեկը։ Իր արմատներով ու ամբողջ ստեղծագործությամբ կապված լինելով անցյալի կյանքին ու կենցաղին, վիպասանը եղել է դրանց հավատարիմ տարեգիրը, միշտ ելակետ է ունեցել իրենց շրջապատող կենսական կոնկրետ փաստերը, իրողությունները, որոնք կարողացել է դարձնել գեղարվեստական տիպականացման հիմք։

Ավելի քան 40-ամյա գրական գործունեության ընթացքում՝ «Սոս և Վարդիթերից» մինչև «Հումոն» և դարասկզբին գրած վերջին անավարտ երկերը կազմում են մի շատ ինքնատիպ գեղարվեստական աշխարհ։ XIX դ. արևելահայ գյուղաշխարհի համայնապատկերն է դա՝ սկսած պարսկական տիրապետության վերջին տասնամյակներից մինչև մեր դարի սկիզբը։ Հայ գյուղի կյանքի ու կենցաղի, մարդկային բնավորությունների, սոցիալական և բարոյական հարաբերությունների, մտածողության և պատկերացումների մի լայն ու հարուստ պատկերասրահ է նրա ստեղծագործությունը, որին դիմել են և կդիմեն ընթերցող սերունդները, ասաց Էդ. Ջրբաշյանը։

Այնուհետև լսվեցին մի շարք ուշագրավ և բովանդակալից զեկուցումներ։ Բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Սարինյանը կարդաց «Ժամանակը Պ. Պոռշյանի ռեալիզմի պոետիկայում» թեմայով զեկուցումը։ Սոցիալական ժամանակը միանգամայն հետաքրքիր օրինաչափություն է գծում Պոռշյանի աշխարհայացքի և ռեալիզմի գեղարվեստական համակարգում, ասաց նա։ Կրելով իրերի շարժումը կարգավորող մի ուրույն ֆունկցիա, այդ կատեգորիան հանդես է գալիս որպես փիլիսոփայական ելակետ և աշխարհընկալման ուղղություն։ Ներկա ժամանակն ըստ Պոռշյանի իռացիոնալ է, այն բնական չէ, ուրեմն և իրական չէ։ Իրականը անցյալն է, որ հրապուրում է իր անփոխարինելի հուշերով, մնայուն արժեքներով և գոյության կայուն հիմքերով։ Անցյալի ու ներկայի անշատման այս կիզակետում Պոռշյանն ընկալեց սոցիալական ժամանակը և իր հոգու ամբողջ խորությամբ վերապրեց ճեղքվող աշխարհի ողբերգական սարսափը։ Երկու աշխարհի սահմանագիծը անլցելի ակոս է առաջ բերում մարդկանց հոգեբանության մեջ, իսկ հեռացող անցյալի ստվերները տանում են թանկ ու անփոխարինելի մի բան, որ անցնում է առհավետ։ Այսպես էլ անցյալ ժամանակը Պոռշյանի գեղարվեստական աշխարհում հանդես է գալիս որպես իգնալի ուզեցույց, սյուժեների սկիզբ և գործողության նպատակ։ Այս ելակետով էլ գրականագետը վերլուծում է «Սոս և Վարդիթեր», «Կովածաղիկ», «Բղդե», «Ցեցեր», «Հացի խնդիր» ստեղծագործությունները։

Որպես ռեալիստ գեղագետ, ունենալով պատմականության խոր զգացողություն և ցույց տալով նահապետական համայնքի կործանման անխուսափելիությունը, Պոռշյանը, սակայն, իբրև մտածող հավատում էր սոցիալական իր իդեալի կայունության պատրանքին։ Սա ազդում է նրա գեղարվեստական մտածողության վրա, կանխորոշելով սյուժեների ու սոցիալ-հոգեբանական կոնֆլիկտների լուծումը։ Բախվում են հինն ու նորը, կրքերի սուր տարերքի մեջ առնում մարդկային արժեքների կշռույթը, ու թեև պատմությունը գործում էր հնի կործանման անխախտ տրամաբանությամբ, սակայն Պոռշյանը սուբյեկտիվորեն կարգավորում է իրերի ընթացքը, կյանքի փլատակների վրա կառուցում նահապետական կյանքի ռոմանտիկական ուտոպիան։ Այստեղից էլ սկիզբ է առնում նրա հոգեկան դրաման, նրա հոռետեսությունը ապագայի հանդեպ և անհետացող անցյալի հովվերգական էլեգիան, վերջում նշեց Ս. Սարինյանը։

Հետաքրքրությամբ լսվեց նաև բանասիրական գիտությունների դոկտոր Պ. Հակոբյանի «Պ. Պռոշյանի անտիպ նամակները» զեկուցումը։ Գրականագետը մասնավորապես ասաց, որ Պռոշյանի նամակները, որոնք կենսագրական առաջնակարգ աղբյուրներ են և խորապես մարդկային ապրումների ու տագնապների արձագանքներ, առ այսօր ամբողջությամբ հավաքված, հետազոտված, մեկնաբանված ու հրատարակված չեն։ Գրողի երկերի ժողովածուներում ընդգրկված են ընդամենը 24 նամակ, փոքր-ինչ ավելի՝ վկայակոչված կամ մեջ են բերված զանազան գրքերում ու հոդվածներում։ Վերջին տասնամյակների որոնումների շնորհիվ, նկատեց Պ. Հակոբյանը, հավաքել ենք դարձյալ նույնքան անտիպ նամակներ՝ գրված 1865—1907 թթ. ընթացքում։ Դրանց մեջ է նաև Պռոշյանի առ այսօր հայտնի ամենավաղ նամակը։ Գրողի նամակները շոշափում են կրթական, գիտական-գրական, կենցաղային հարցեր և ազգային հետադիմության դեմ գրողի մղած անզիջում պայքարի դրվագներ։ Պռոշյանի հասցեատերերն են հայագետ ու հանրային գործիչ Կարապետ Եղյանցը, ազգային բարերար Մկրտիչ Սանասարյանը, գրականագետ Յուրի Վեսելովսկին, ազգային այլևայլ հաստատություններ, ինչպես նաև իր զավակները։ Ալեքսարդ գրողը շարունակ դեգերումների մեջ էր որդիների կրթությունը կանոնավոր հունի մեջ դնելու, կյանքի պայմանները որոշ չափով բարելավելու և ավագ որդուն՝ հեղափոխական Պռոշին, բանտից ու աքսորից ազատելու համար։

Թեև հոր ու որդիների միջև կային գաղափարական տարաձայնություններ, Պռոշյանը նրանց համար միշտ մնում էր օրինակելի ծնող, սիրող հայր, և իր զավակներին առաջնորդում էր բարության ու առաքինության ուղիներով։

«Պերճ Պռոշյանի «Հունոն» վեպի գաղափարական բովանդակությունը» զեկուցմամբ հանդես եկավ բանասիրական գիտությունների թեկնածու Հ. Գարբինյանը։ XIX դ. սոցիալական կոնֆլիկտները արտացոլող Պռոշյանի վեպերը լայն ժողովրդականություն են վայելում. ձեռք բերում ճանաչողական մեծ արժեք, հեռանկարային հայ գյուղում կատարվող սոցիալական տեղաշարժերն ընկալելու և իմաստավորելու գործում, շեշտեց նա։ Գյուղացիության սոցիալ-դասակարգային ընդվզումի ու տարերային պայքարի, հոգեբանության ու կենցաղի պատկերները լի են ժողովրդի՝ դարերով ձեռք բերած բարոյական արժեքների կորստյան տագնապներով։ Այս իմաստով հետաքրքրական է «Հունոն»՝ առաջին վեպը հայ իրականության մեջ։ Այն նշանավորվում է ունեզրկված գյուղացիության կյանքում ու գիտակցության մեջ տեղի ունեցող խոր փոփոխությունների գեղարվեստական ճշգրիտ ընկալումներով ու արմատական հարցադրումներով։ Վիպասանը «իր շավղից դուրս եկած» աշխարհն ապաքինելու համար առաջադրում է զինված պայքարի գաղափարը։

Բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Ալեքսանյանի «Ժողովրդագրությունը Պ. Պռոշյանի գեղագիտական համակարգում» զեկուցումը նվիրված էր գրողի գեղարվեստական ժառանգության մեջ որակ կազմող ժողովրդագրությանը։ Վիպասանի ստեղծագործության մեջ ժողովրդագրության տիրապետող առկայությունն ունի պատմական և իմացաբանական պատճառաբանվածություն։ Պատմական պատճառները հեղինակի կողմից պատկերվող իրականության՝ տոհմական համայնքի կառուցվածքային առանձնահատկություններ մեջ են, նշեց զեկուցողը։ XIX դ. սկզբում հայ համայնքը անհամեմատ ներփակ տնտեսական և մշակութային միավոր էր։ XIX դ. կեսերից սկսած այն, արտաքին ազդակների ներգործությամբ, կազմալուծվում ու քայքայվում էր։ Հայ պահպանողական մտայնությունը, որը ազգի զարգացման պատմությունը դիտում էր որպես պատմամշակութային զոյաբանություն, սոցիալ-տնտեսական առաջընթացը ներկայացնող այդ իրողությունը համարում էր որպես ավերմունք ու քաոս ստեղծող ընթացք և փորձում որոշակի միջոցներով կանխել այն։ Նահապետական կյանքի և նրա մշակութային արժեքների իդեալականացումը Պ. Պռոշյանի արվեստում անցյալի ներդաշնակությունը վերականգնելու յուրահատուկ փորձ էր։

Գիտական նստաշրջանում եզրափակիչ խոսք ասաց էդ. Զրքաշյանը։ Թեպետ հայ գրականագիտությունը զգալի գործ է կատարել Պռոշյանի ժառանգության ուսումնասիրության ուղղությամբ, սակայն այս բնագավառում կան հարցեր, որոնք նոր լուսաբանություն են պահանջում, նշեց նա։ Անհրաժեշտ է ավելի խոր հետազոտել Պռոշյանի ռեալիստական մեթոդի և տիպականացման արվեստի յուրահատկությունը, լեզվի և կոմպոզիցիայի սկզբունքները։ Հերթի են սպասում գրողի գիտական կենսագրությունը, կյանքի և ստեղծագործության տարեգրությունը, ամբողջ ժառանգության գիտական հրատարակության նախապատրաստումը։ Գրողի ծննդյան 150 ամյակի տոնակատարությունը գալիս է հավաստելու, որ ժողովուրդը հիշում, սիրում և գնահատում է Պ. Պռոշյանին՝ իր կյանքով, ճակատագրով ու ստեղծագործությամբ։

ՄԱԳԴԱԼԻՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
ՄԵԼԱՆԻԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ